ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

«Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն»

Իրականացման ժամանակահատված: 01.02.2024 - 31.03.2027

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 400 000

Ընդհանուր բյուջե: € 530 370

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Media Initiatives Center (MIC), Yerevan Press Club (YPC), Media Diversity Institute (MDI), International Media Support (IMS)

Նախագծի նկարագրություն:

«Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն» ծրագիրը նպաստում է լրատվամիջոցների հզորացմանը՝ խթանելով նրանց անկախությունն ու կայունությունը, աջակցելով պատասխանատու ու հանրային նշանակություն ունեցող բովանդակության պատրաստմանը և մեդիա միջավայրի բարեփոխումների գործընթացում լրատվամիջոցների, իշխանությունների ու քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գլխավորած կոնսորցիումի կազմում են Երևանի մամուլի ակումբը, Մեդիա բազմազանության ինստիտուտը և Միջազգային մեդիա աջակցություն կազմակերպությունը (Դանիա):

Աշխատանքներ են տարվում մեծացնելու լսարանի վստահությունը՝ զարգացնելով էթիկական սկզբունքների, թափանցիկության և հաշվետվողականության վրա հիմնված ինքնակարգավորման մեխանիզմներ: Խնդիր է դրված խթանել մեդիագրագիտությունը, որպեսզի բովանդակություն սպառողներն առավել հմուտ կողմնորոշվեն լրատվական դաշտում:

Ծրագիրը լրագրողներին և լրատվամիջոցներին առաջարկում է վերապատրաստումներ ու խորհրդատվություն, ինչպես նաև դրամաշնորհներ: Աջակցություն է տրամադրվում անվտանգ գործունեության համար՝ ապահովելու լրագրողների ֆիզիկական պատրաստվածությունը և նրանց կողմից օգտագործվող առցանց հարթակների

Ակնկալվող արդյունքներ:

1. Մեդիա կազմակերպությունները կարող են գործել որպես պրոֆեսիոնալ, անկախ և կայուն բիզնես կառույցներ:
2. Մեդիա կազմակերպությունները և դերակատարները ստեղծում են ընթերցողի համար առավել ուշագրավ, վերլուծական, պատասխանատու և վստահելի բովանդակություն:
3. Քաղաքացիական հասարակությունը, լրատվամիջոցները և պետական կառույցները համատեղ մասնակցում են մեդիա դաշտի բարեփոխումներին: